

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ *)

Սեփական դրամագլուխներ, համեմատաբար, քիչ լինելով, բնական էր որ Ռուսաստանի ընդարձակ բնական հարստութիւնները դէպի իրանց գրաւէին օտար դրամագլուխներ: Այդ հոսանքը հետեանք էր դրամագլխի բնական ձգտման այնտեղ, ուր նա կարող է իր համար աւելի նպաստաւոր գործադրութիւն գտնել: Մինչդեռ հին հարուստ երկրներում դրամագլխի տոկոսի քանակը, և համապատասխան դրան՝ սովորական ձեռնարկունների օգուտի չափը աւելի և աւելի իջնում է, որովհետև գործունէութեան աւելի նշանաւոր և արդիւնաբեր ձեւերը արդէն վաղուց չահագործուած են,— ընդհակառակը Ռուսաստանում, ինչպէս անսպառելի, այլ և չը ձեռնամխուած հարստութիւններ ունեցող նորահաս մի երկրում, դրամագլուխները կարող են գործադրութիւն գտնել արդիւնագործութեան բոլորովին նոր ձեւերում, որոնք մինչև օրս կամ շատ քիչ և կամ բնաւ չեն չահագործուած և որոնք, սակայն, նշանաւոր արդիւնք են տալիս: Նախկին ժամանակներում օտար դրամագլուխները Ռուսաստանում գործադրութիւն էին գտնում միայն պետական փոխառութիւնների ու երկաթուղային պարտաթղթերի (օբլիգացիա) ձևով, այն-ինչ վերջին 20—25 տարում օտար դրամագլուխները թափուեցին Ռուսաստանի զանազան արդիւնաբերական ձեռնարկութիւններում գործադրուելու համար: Այդ բանին որոշ չափով նպաստեց Ռուսաստանում տիրապետող մաքսային հովանաւորող դրութիւնը, որ նշանաւոր կերպով պաշտպանում է տեղական արդիւնաբերութիւնները օտար մրցումներից, ուստի և օտարերկրացի ձեռնարկունները, փոխանակ ներմուծելու Ռուսաստան իրանց գործուածքները, աւելի ձեռնտու համարեցին մտցնել այդ երկիրը իրանց դրամագլուխները և չահագործել նրանց՝ արդիւնաբերա-

*) Россия въ концѣ XIX в. գրքից:

կան ձեռնարկութիւններ հիմնելով ուղղակի Ռուսաստանում և այդպիսով օգտուել նաև գոյութիւն ունեցող հովանաւորող սիստեմի բոլոր առաւելութիւններէն: Վերջին ժամանակներս օտար դրամազուլաները ամենից շատ գործադրութեան տեղ գտան իրանց համար մետաղարարական և քարածուխի արդիւնաբերութիւնների մէջ: Առաջին մետաղարարական գործարանը հիմնել է 1871 թուին Եկատերինօպոլսում անգլիացի Ջօն Իւզը, որ այդ նպատակի համար կազմել էր «Նօվորոսեան ընկերութիւնը» 300,000 ֆունտ ստերլինգ դրամազլիով: Այդ գործարանը, որ իր արդիւնաբերական չափով և իր մէջ աշխատող ձեռքերի քանակութեամբ (մօտ 10,000 բանուոր) գեռ հիմա էլ Ռուսաստանի մետաղարարական ամենախոշոր գործարանն է համարւում սկզբում հիմնուել է մի բոլորովին անընակ տեղի վրայ: Ներկայումս նրա մօտերքում ապրում է 30,000 բնակիչ ունեցող մի գիւղ, որ գործարանի հիմնադրի անունով Իւզովկա է կոչւում:

1880 թուին հիմնուել է հարաւային Ռուսաստանում «Կրիվորօթեան հանքերի ֆրանսիական ընկերութիւնը», 5 միլիօն հիմնական դրամազլիով: Այդ ընկերութիւնը եղաւ հարաւային Ռուսաստանի երկաթահանքերի մշակման սկզբնապատճառը և ապա ժամանակի ընթացքում կառուցեց նաև իր սեփական մետաղարարական գործարանը (Գդանցեվսկի): Այդ ժամանակից սկսած հարաւային Ռուսաստանում մետաղարարական արդիւնաբերութիւնները մեծ զարգացում ստացան, և այդ յատկապէս օտար դրամազուլաների չնորհիւ:

Նոյն ձևով հիմնուեց 1889 թուին նաև Եկատերինօպոլսի մօտ գտնուող Կամենսկ գիւղի «Հարաւ-Դնեպրեան գործարանը», 5 միլիօն հիմնական և $2\frac{1}{2}$ միլիօնի պարտաթղթային կապիտալով: Այդ ընկերութեան գլխաւոր մասնակիցները՝ մէկ կողմից, բելգիական Կօկերիլեան ընկերութիւնն էր, միւս կողմից՝ Վարչավեան պողպատածուլական գործարանի ընկերութիւնը:

1891 թուին հիմնուել է «Դօնեցկի երկաթագործական և պողպատածուլական արդիւնաբերութեան ընկերութիւնը» (Դրուժկովսկի գործարան), մասնակցութեամբ ֆրանսիացի Պատօր և Վերդիէ դրամատէրերի (ընկերութեան հիմնական դրամազլուին այժմ 3 միլիօն ռուբլի է ոսկով, և օրիգալիաներով $1\frac{1}{2}$ միլիօն ռուբլի, նոյնպէս ոսկով):

1895 թուին կազմակերպուել է «Ռուս-Բելգիական մետաղագործական ընկերութիւնը», որի հիմնական դրամազլուիւր հասնում է այժմ 10 միլիօն ռուբլու և որ շինել է Պետրովեան ահագին գործարանը: Դրա հետ միաժամանակ Իւրեվկա կայա-

բանի մօտ հիմնուել է Դօնեցկո-Իւրեյսկի գործարանը, 5 միլիօն ռուբլի հիմնական դրամազույլով: Միւս մետաղագործական գործարանը կառուցել է Տագանրօկի մօտ Ֆրանսիական ընկերութիւնը, որի հիմնական դրամազույլն այժմ $3\frac{3}{4}$ միլիօն ռուբլու է հասնում ոսկով: Մարիուպօլի մօտի գործարանը իր գոյութիւնը պարտական է ամերիկացի դրամատէրերի մասնակցութեան. հիմնողը Նիկօպօլ-Մարիուպօլի ընկերութիւնն է, հիմնական դրամազույլը 3 միլիօն ռուբլի է ոսկով: Լուգանսկ քաղաքի մօտի «Օլիսովսկի» և Մարիուպօլի մօտի «Պրօվիդանս» գործարանները, որոնք հիմնուած են վերջերս, իրանց գոյութեամբ պարտական են բելգիական ընկերութիւններին, որոնցից մէկի հիմնական դրամազույլն է 5 միլիօն ֆրանկ, իսկ միւսինը՝ 6,650,000 ֆրանկ: Ներկայումս հարաւային Ռուսաստանում էլի քանի մի մետաղարարական գործարաններ են կառուցուում. սրանք են՝ Վերին-Դնեպրեան ընկերութիւն (5 միլ. ֆր. հիմն. դրամ.) Բելգիական-Ալմազեան ընկերութիւն (6 միլ. ֆր. հիմն. դրամ.) և գլխաւոր ընկերութեան «Մակէեւսկիի պողպատաձուլական գործարանները»:

Ռուսաստանի մետաղարարական արդիւնաբերութեան միւս մեծ շրջանում—Լեհական թագաւորութեան մէջ—օտար դրամազույլները նոյն կերպով գործունեայ մասնակցութիւն ունեցան այդ արդիւնաբերութեան զարգացման մէջ: Այդ շրջանի մետաղարարական գործարաններից ամենամեծը Դօմբրովի «Գուտա Բանկօվա» կոչուածն է: Այդ գործարանը, դեռ 1842 թուին լեհական դրամատան միջոցներով հիմնուած լինելով՝ շատ փոփոխութիւնների է ականատես եղել և 1876 թուից շահագործուում է ֆրանսիական ընկերութիւնից: Երկրորդ խոշոր գործարանը «Եկատերինա»-ն է, Սօջնովիցի մօտեքոյում, որ պատկանում է գերմանական մի ընկերութեան (Королевский и Лаура): Գերմանական միւս՝ «Friedenshütte» ընկերութիւնը հիմնել է նոյն տեղում նաև Միլվիցկի գործարանը, Նոյն տեղ են գտնուում նաև խոշովակաշէն երկու ահագին գործարաններ, որոնցից մինը հիմնել է պրուսական հպատակ Գուլդշինսկին, իսկ միւսը—նոյնպէս պրիւսական հպատակ Ֆիցնէրը և չվէյցարական քաղաքացի Համպէրը: Առհասարակ, Լեհական թագաւորութեան մէջ եղած մետաղարարական արդիւնագործութեան մէջ գործադրութիւն գտան առաւելապէս գերմանական դրամազույլները, մինչդեռ հարաւային Ռուսաստանում կենտրոնացան գլխաւորապէս բելգիական և ֆրանսիական դրամազույլները և միայն մասամբ անգլիականն ու ամերիկականը (Իւզի և Նիկօպօլ-Մարիուպօլի գործարանները):

Ռուսաստանի մետաղարարական երրորդը—Ուրալեան՝ ըստ ժամանակի աւագագոյն շրջանում, հանքային հարստութիւնները շահագործելու համար օտարերկրացի ընկերութիւնները միայն վերջերս սկսեցին կազմակերպուել։ Այդպէս են, օրինակ, Ուրալեան-Վօլգեան մետաղարարական ֆրանսիական ընկերութիւնը (18 միլ. ֆր. հիմն. դրամագլխով), նոյնպէս Վօլգեան-Վիշերեան լեռնային և մետաղարարական ֆրանսիական ընկերութիւնը (9,375,000 ռ. հիմն. դրամ. և 4,687,500 ռ. պարտաթղթերով), Հարաւ-Ուրալեան մետաղարարական բելգիական ընկերութիւնը (6 միլ ֆր. հիմն. դրամ.) և «Երմակ» ընկերութիւնը, որին մասնակցում են գլխաւորապէս անգլիացի դրամատէրերը (18 միլիօն ռուբլի հիմնական դրամագլ.)։

Արդիւնաբերական միւս ճիւղը, որի մէջ օտար դրամաւորները ուժեղ մասնակցութիւն ունին, դա փաւածուխի արդիւնաբերութիւնն է, և ինչ որ վերին ասուեց մետաղարարական շրջաններում ձեռնարկողների դասաւորութեան վերաբերմամբ ըստ ազգայնութեան, նոյնը տեղի է ունեցել նաև քարածուխի շրջանների նկատմամբ։ Այսպէս, օրինակ, Լեհական թագաւորութեան մէջ, Վարշավայից արեւմուտք, Դոմբրովի շրջակայքում, շատ վաղուց է որ հաստատուել են գերմանացի ձեռնարկողները («Կոմս Ռենարդ», «Սօնոփիցեան ընկերութիւն», «Սատուրն», «Հօհենլօէ իշխանի», «Չելեաձ»), որոնց մէջ ֆրանսիական ընկերութիւնը կարծես բացառութիւն է կազմում. իսկ հարաւային Ռուսաստանում, Դոնէցի աւազանում, ընդհակառակը՝ քարածուխի հանքերը գլխաւորապէս շահագործւում են ֆրանսիական դրամագլուխներով (Շչերբինովի հանք, Կրիվօրօժեան երկաթահանքերի ընկերութիւն, Լեռնային և արդիւնաբերական ֆրանսիական ընկերութիւն և միւսները) ու բելգիականներով (Ալմադեան ընկերութիւն, Ռուս-Բէլգիական ընկ., Ռուս-Դոնեցեան ընկ., Պրօխորովեան հանքեր և ուրիշները), և միայն մասամբ անգլիականներով (Նօվօրօսեան ընկերութիւն)։ Ըստ 1897 թուականի հաշուետեսութեան՝ 45 մետաղարարական ընկերութիւնների հիմնական դրամագլուխը կազմում էր 108 միլ. ռուբլի, բոլոր դրամագլուխները 140,2 միլ. ռուբլի, պահանջքը (ակտիւ) 215 միլ. ռուբլի, շահաբաժինը (գիլիդեանտ) $6\frac{1}{2}$ միլ. ռուբլի. իսկ քարածուխի 15 ձեռնարկութիւնների հիմնական դրամագլուխը հաւասար էր 59,6 միլ. ռուբլու, բոլոր դրամագլուխները 83,3 միլ. ռ., պահանջքը 96 միլ. ռուբլի, իսկ շահաբաժինը 2,9 միլ. ռուբլի։ Արդիւնաբերական այդ երկու ճիւղի հիմնական դրամագլուխը 167,5 միլ. ռ. բոլոր դրամագլուխների գումարը 223,5 միլ. ռ. պահանջքը—311 միլ. ռ. իսկ շա-

հաբաժինը—9,4 միլ. ռ., որ ասել է՝ հիմնակ. դրամագլխին ընկ-
նում է 5,60/0, այսինքն բոլոր դրամագլուխների առմամբ—4,20/0,
իսկ պահանջքի առմամբ 30/0:

Այդ 60 ձեռնարկութիւնից մասնաւորապէս շահաբաժին
են ստացել.

3-ը մինչև 200/0 և աւելի.

5-ը 100/0—16,70/0.

18-ը 50/0—100/0.

3-ը 1,30/0—3,50/0.

11-ը բոլորովին չեն տուել շահաբաժին:

12-ը, միայն մի տարի գոյութիւն ունենալով, չեն
տուել որեւէ շահաբաժին, իսկ 8-ը փնտ և կրկի

Նաւթային արդիւնաբերութիւնը իր ծաղկմամբ, յայտնի
չափով, նոյնպէս պարտական է օտար դրամագլուխներին: Ամն-
նահին և իր գործերով ամենամեծ նաւթային արդիւնաբերու-
թիւնը հիմնուել է 1876 թ. չլեզական հպատակ Նօբէլ եղբայր-
ների ձեռքով (դրա այժման հիմնական դրամագլուխը 15 միլ.
ռ., բոլոր դրամագլուխը 30 միլիօն, չրջառութեան մէջ է 64 միլ.
ռուբլի): Միւս խոշոր ձեռնարկութիւնը Կասպեան-Սևծովեան
Նաւթային ընկերութիւնն է, որ հիմնել են Բուսգէ և Պալաչ-
կովսկի, և որ 1886 թուին անցել է Ռօտշիլդի ֆրանսիական առե-
տրական տան ձեռքը (հիմն. դրամ. 6 միլ. ռուբլի): Վերջին ժա-
մանակներս ռուսական Նաւթային արդիւնաբերութիւնը դէպի
իրան է քաշում անգլիական դրամագլուխները: Այսպէս՝ Թադի-
եվի նախկին ձեռնարկութիւնը գնեցին անգլիացիք 5 միլ. ռուբ-
լիով, տալով՝ Russian-Petroleum and liquid fuel Co. limited ան-
ունը, հիմնական դրամագլուխն է մէկ միլիօն ֆունտ ստեր-
լինգ: Շիրասկի Նաւթահորերն ու գործարանները 31/2 միլ. ռ.
ձեռք է բերել անգլիական The Shibaëff Petroleum Co. limited
ընկերութիւնը: Արաֆելովի, Բուզազովների և ուրիշների նաւ-
թային գործերը ձեռք է բերել Baku-Russian Petroleum Co.
limited ընկերութիւնը 7 միլ. ռուբլով (հիմն. դրամ. 1,300,000
ֆունտ ստերլինգ): Բացի դրանից հիմնուած են նաև մի քանի
նոր ընկերութիւններ, ինչպէս են՝ «Ռուսական Ստանդարտ»,
«Գուրիայում (Կովկաս) Նաւթ և այլ հանքեր որոնելու և շահագոր-
ծելու համար բելգիական ընկերութիւնը» և ուրիշները:

Օտար դրամագլուխները նշանաւոր գործադրութիւն գտան
Նաև աֆրիկայի ձեռնարկութիւնների մէջ, որոնք վերաբերում են
ֆաղաֆների բարեկարգութեան, որպէս են՝ ջրանցքները, ձիա-
քարները, գազային և ելեկտրական լուսաւորութիւնները:

Արդիւնաբերական այլ ձեռքերից պէտք է յիշել նաև ձե-

ռակերտականը (մանուֆակտուրային)։ Քառասնական թուականներին այդ արդիւնաբերութեան զարգացմանը նշանաւոր չափով նպաստել է Մոսկուայի շրջանում կնօպի ֆիրման, որ անդլիական դրամագլխով օգնում էր ուսս գործարանատէրերին և ինքը շինում նրանց գործարանները և մատակարարում բոլոր մեքենաներն ու պարագաները։ Ներկայումս օտար ձեռնարկութիւնների թիւը մանուֆակտուրային արդիւնաբերութեան մէջ Մոսկուայի շրջանում աննշան է (ամենամեծ գործարաններն են՝ Յինդէլի, Գիւբնէրի, Ժիրոյի), այն-ինչ օտար դրամագլուխները (առաւելապէս գերմանականները) մեծ դեր են խաղում մանուֆակտուրային արդիւնաբերութիւններում Լեհական թագաւորութեան մէջ (Լօձի և Սօսնովիցի շրջաններին)։ Այդտեղ օտարերկրացիներից հիմնուած գործարաններից ամենամեծերն են՝ Ժիրար-դովեան, Զաւերցի, Դիտէլի, Շէնի, Լէօնարդի, Լէօն Ալլարտի, Դեսիւրմօնի և ուրիշների։

Ընդհանուր առմամբ պէտք է խոստովանուել, որ օտար դրամագլուխները բարեյաջող ազդեցութիւն են ունեցել երկրի արդիւնաբերական զարգացման վրայ, տարածելով արուեստագիտական տեղեկութիւններ, զարգացնելով ձեռներէջութեան ոգին, ստեղծելով արդիւնաբերական նոր կենտրոններ և աշխատանքի պահանջը մեծացնելով, որի արդիւնքը եղել է բանուորավարձի բարձրանալը։

Օտարերկրեայ ձեռնարկողները նաև հոգս են տանում բանուորների վիճակը բարուղբելու մասին՝ շինելով լաւ բնակարաններ, հիւանդանոցներ, խնայողական գանձարաններ և այլն և այլն։ Հին ձեռնարկութիւններից մեծ մասն արդէն կարողացել է ձուլուել և դառնալ ուսական։ Նորերը կամաց-կամաց հետևում են այդ ուղղութեան։ Նոյնը կարելի է ասել նաև ծառայողների և վարպետների քանակութեան մասին։ Նոր ձեռնարկութիւնները համար դրանք առաւելապէս օտարերկրացիներից են վերցրւում, իսկ ժամանակի ընթացքում փոխւում ուսս ծառայողներով։